

ԵՐԿՃԻՒՂ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՄԻ ԲԱՆԱՎԷՃ՝ 1899Ի ԱՆԱՀԻՏԻ, ՄՈՒՐՃԻ ԵՒ ՄՇԱԿԻ ԷՋԵՐՈՒՄ

ԴԱԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԺԹ. դարը նախանշեց եւ վաւերացրեց հայ գրականութեան եւ մամուլի զարթոնքի, ապա նաեւ՝ վերնթաց զարգացման նոր հանգրուանները: Այս հարիւրամեակում եւս հայ ժողովրդի երկատուած վիճակը պայմանաւորել էր երկու գրականութեան, երկու մամուլի առկայութիւնը: Սակայն խորքում ազգային հիմնախնդիրների միասնական ուղղուածութիւնը, հայ մտաւորականի հոգեւոր ամբողջականութիւնը մըղում էր նրան նոյն մտահոգ հայեացքով հետեւելու երկու հատուածներում էլ մշակութային կեանքի զարգացման ընթացքին: Փոխադարձ հետաքրքրութիւնն աւելի էր մեծացել յատկապէս 1890ականների վերջին:

Ինչ խօսք, արեւելահայ ու արեւմտահայ գրական գործիչները միմեանց աշխատանքը գնահատելիս միշտ չէ, որ համակարծիք էին: Իսկ տարաձայնութիւնների առիթ կարող էին ծառայել նոյնիսկ կողմնակալութեամբ չտառապող գրախօսականները: Նման մի հրապարակում իր ամսագրում տպագրել էր Արշակ Զօպանեանը (1872-1954): «Մուրճը, որուն տասնամեակը տօնուեցաւ մէկ քանի ամիս առաջ, ռուսահայոց երրորդ մեծ ամսաթերթն է, Հիւսիսափայլէն ու Փորձէն յետոյ, եւ եթէ երկու նախորդներուն հռչակը չէ ունեցած ոչ ալ փայլը, պէտք է խոստովանիլ, թէ անոնցմէ աւելի ընդարձակ ծրագիր մը ունեցած է եւ աւելի տեսական կրցած է ըլլալ»¹: Այսպէս սկսելով իր գրախօսութիւնը *Մուրճի* (1889-1907) գրական քաղաքականութեան մասին՝ Զօպանեանը թերեւս չէր մտածում, թէ իր դիտարկումներն այդքան բուռն հակադեցութիւն կ'ունենան *Մուրճի* խմբագրի մօտ: Աւետիք Արասխանեանի (1857-1912) պատասխանը չուղացաւ, եւ *Մուրճի* ու *Անահիտի* (1898-1949, ընդհատումներով) էջերում (որոշ հարցերում նրանց արձագանգեց *Մշակը* (1872-1921) ծաւալուեց մի բանավէճ հայ գրականութեան երկու հատուածներում (արեւելահայ ու արեւմտահայ) առկայ գրական կողմնորո-

շումների, գեղագիտական տարբեր ըմբռնումների, ստեղծագործութեան լեզուի ու ոճի եւ այլ խնդիրների շուրջ:

Իր գրախօսութեան մէջ Չօպանեանը մի քանի անգամ շեշտում է Մուրճի գլխավոր արժանիքը՝ այն, որ վերջինս, հանդէս գալով աւելի ընդարձակ ծրագրով, քան Հիւսիսափայլն (1858-1862, 1864) ու Փորձը (1876-1881), ձգտել է ընդլայնել ազգային մտքի սահմանները, հաղորդակցել նրան մշակույթի համամարդկային արժէքների հետ: Չանտեսելով Մուրճում տպագրուած այդ ուսումնասիրութիւնների թերի կողմերը՝ Չօպանեանը, դրանով հանդերձ, նշում է. «...բայց էականը ինծի համար սա իրողութիւնն է, թէ Մուրճն է եղած այն հայ առաջին ամսաթերթը, որ այսքան ընդարձակ ու լայնօգի ծրագիր ունենայ»²:

Այնուհետեւ Անահիտի խմբագիրն առանձնակի ուշադրութիւն է դարձնում ամսագրում իր կողմից նկատուած թերութիւններին: Նա Մուրճի հիմնական պակասութիւնն է համարում նրա բովանդակութեան անհաւասարութիւնը. «Մուրճը, նուազ քանձրածաւալ եւ աւելի ընտրուած ու հոծ, պիտի շահէր մեծապէս. Հիւսիսափայլն ու Փորձը մինչեւ այսօր ծայրէծայր կը կարդացուին ախորժով. Մուրճի տասնամեայ հաւաքածոյին համար նոյն բանը կարելի չէ ըսել»³: Եւ ապա աւելացնում է, որ ամսագրում առկայ է «անմարսելի ուսումնասիրութեանց, ծանրատաղտուկ վէպերու եւ անհամ բանաստեղծութեանց ահագին ղէզ»⁴, թէեւ այս պարագայում որեւէ որոշակի օրինակ չի մատնանշում:

Գրախօսութեան վերջում քննուում է Մուրճի լեզուի ու ոճի խնդիրը: Արեւելահայ գրողների ոճը, գրում է Չօպանեանը, «դանդաղ ու ճապաղ է», պատմուածքները՝ երկարաբան, նկարագրութիւնները՝ նրբութիւնից զուրկ⁵: Այս առումով նրանք չեն կարող համեմատուել արեւմտահայերի հետ, որոնց ոճի նրբութիւնը յօդուածագիրը պայմանաւորում է եւրոպական, մասնաւորապէս՝ ֆրանսական եւ իտալական գրականութեան հետ ունեցած սերտ հաղորդակցութեամբ⁶: Շատ աւելի անմխիթար վիճակում է արեւելահայ գրական լեզուն, որ «դեռ խառնակ է ու կարծր. եւ արդէն լեզուի անխնամ վիճակը ոճին անգարգացման գլխատըր պատճառներէն մէկն է, լեզուն ըլլալով ոճին նիւթէղէնը»⁷: Նա դէմ է յատկապէս արեւելահայերէնում օտար բառերի առատ գործածութեանը եւ գտնում է, որ Մուրճը կարող է այս ասպարէզում մեծ ու կարեւոր աշխատանք կատարել, այն է՝ արգելել, որ իր հրապարակումները պարունակեն որեւէ օտար բառ⁸:

Արասխանեանը իր պատասխան յօդուածում⁹ հանգամանօրէն անդրադառնում է Չօպանեանի դիտարկումներին: Նախորդ եւ այս յօդուածներում ներկայացուած փաստարկները, առաջադրուած դրոյթներն ու եզրակացութիւնները վկայում են, որ հայ գրականութեան երկու հատուածի ներկայացուցիչները ուրոյն դիրքորոշումներով էին մօտենում նոյն խնդրին: Թերեւս այդպէս էլ պիտի լինէր, քանի որ նրանք մշակութային տարբեր միջավայրերի ծնունդ էին, գործում էին քաղաքակրթական տարբեր տեքստերի շրջանակներում, եւ մօտեցումներն էլ, բնականաբար, խիստ անհատականացուած էին:

Չօպանեանի՝ Մուրճին տուած գրական գնահատականն անգամ, այն է՝ «ընդարձակ ու լայնօգի ծրագիր» ունենալը, միանշանակօրէն չի ընդունում Արասխանեանի կողմից: Վերջինիս կարծիքով՝ Անահիտի խմբագիրը ի գօրու է «հատ-հատ ճշմարտութիւններ» նկատել, բայց դրանց միջեւ եղած պատճառական կապերը դուրս են նրա ըմբռնումի սահմաններից¹⁰:

Այնուհետեւ, Արասխանեանը աւելի հանգամանօրէն կանգ է առնում թարգմանական գրականութեան եւ լեզուաոճական խնդիրների շուրջ Չօպանեանի արտայայտած մտքերի վրայ: Երկու կողմերի բերած փաստարկների համեմատութեամբ ի յայտ են գալիս տարբերութիւններն ու ընդհանրութիւնները:

Թարգմանական գրականութեան մէջ օտարալեզու գրողների լաւագոյն ստեղծագործութիւնների հայացումը, ըստ Չօպանեանի, պէտք է նպաստի զարգացած քաղաքակրթութիւնների տիրական ազդեցութիւնը հայութեան վրայ տարածելուն¹¹: Չօպանեանի միտք բանին ընդհանուր առմամբ սա է, թէեւ Արասխանեանը պարզունակացնում է խնդիրը՝ Անահիտի խմբագրին մեղադրելով, թէ իբր նրա «տեսութիւնը տանում է դէպի թարգմանութիւնները անխտիր», նրա «տեսութիւնը ձեռնած է գրագէտներին ոճի մէջ կրթելու համար» եւ կամ՝ «Ձեզ համար կարելի է ասել, թէ ժողովուրդ չկայ, այլ կայ «գրագէտների» դասակարգ» եւն.¹²: Չօպանեանի դիտարկումները թարգմանական գրականութեան մասին կապելով սոսկ ոճի զարգացման խնդիրների հետ՝ Արասխանեանը նշում է, որ ինքը այդ գրականութիւնն ընդունում է ամէնից առաջ որպէս ազգի կրթութեան օժանդակ միջոց:

Ի դէպ, իր գրախօսութեան մէջ նոյն միտքն արտայայտում է նաեւ Չօպանեանը. «Ռուս քաղաքակրթութիւնը Ասիոյ վրայ տարածուող մտաւոր տիրական գօրութիւնը ըլլալու սահմանուած է, եւ ռուս մտածումն ու ռուս արուեստը պէտք է ծանօթ դառնան Հայերու ամբող-

ջութեանը» (ընդգծումն իմն է - Դ.Պ.)¹³։ Երկու խմբագիրների մտածողութեան ընդհանրութիւնն այս հարցում առկայ է. այլ բան, որ Մուրճի խմբագիրն առիթն օգտագործում է ամսագրի նպատակն ու անելիքները ընթերցող հանրութեանը մէկ անգամ եւս ներկայացնելու։ Այստեղ արդէն Արասխանեանի հայեացքները բխում են ազգային գրականութեան զարգացման մասին արեւելահայ հատուածում տիրող ընդհանուր մտայնութիւնից։ Եւ թարգմանական գրականութեան մասին նրա մտորումները ներառուած են գաղափարական այս համատեքստի մէջ. «Ամսագիրը, ուրեմն, որպէս առիաստրակ, նաեւ թարգմանական գրականութեան նկատմամբ ոչ այնքան իբր շտեմարան պիտի ծառայի, որքան դրդիչ եւ ուղեցոյց օրգան. իր հրատարակած թարգմանական վէպերը, գրոյցները, դրամաները պետք է ունենան դրդիչ կողմեր... Ամսագիրը ոչ այնքան գրականութիւնը հարստացնելու է գալիս, որքան մտքեր պատրաստելու ու գրականութիւնը ուղիղ ճանապարհի վրայ դնելու, այն հարստացնելու ուղին հարթելու համար»¹⁴։

Մօտեցումների ընդգծուած տարբերութիւն է նկատուում Մուրճի պարունակութեան մասին երկու խմբագիրների արած դատողութիւններում։ Արասխանեանը կտրականապէս դէմ է իր ամսագրում անմարսելի ուսումնասիրութիւնների, ծանրատաղտուկ վէպերի ու անհամ բանաստեղծութիւնների ահագին դէզի մասին Չօպանեանի տուած բնութագրմանը։ Նրա հերքումները համոզիչ են յատկապէս, երբ հարցը վերաբերում է Մուրճում տպագրուած չափածոյ գործերին։

Ուշագրաւ միտումներ կարելի է նկատել արեւելահայ գրականութեան ու ոճի մասին Չօպանեանի եւ Արասխանեանի դատողութիւններում։ Իր գրախօսութեան մէջ Չօպանեանը մի քանի խօսքով բնութագրել էր արեւելահայ գրողների ոճը՝ իբրեւ դանդաղ ու ճապաղ, երկարաբան, նրբութիւնից զուրկ։ Գրականութեան ոճի վեարբերեալ Չօպանեանի այս տեսակէտը չընդունելով՝ Մուրճի խմբագիրը փորձում է դրան հիմնաւոր, խորքային բացատրութիւններ տալ։ Ըստ նրա՝ արեւելահայ գրողները իրենց ստեղծագործական զարգացման ընթացքում «ներքեւից բարձրացել են վերեւ», հետեւաբար առաւել ինքնուրոյն են «թէ՛ նիւթի եւ թէ՛ նոյնիսկ ձեւի ու լեզուի կողմից», մի բան, որ բնորոշ չէ արեւմտահայ գրականութեանը¹⁵։ Այնտեղ տեղի է ունեցել հակառակ ընթացքը։ Ուստի, գրում է Արասխանեանը, արեւմտահայերէնը ձեւաւորուել է թարգմանական գրականութեան ազդեցութեամբ, «մինչդեռ արեւելեան հայոց գրական լեզուն զարգացել է ինքնուրոյն գրականութեան հետ միասին, երբեք սորանից ոչ առաջ գնալով եւ ոչ ետ մնալով»¹⁶։

Անահիտի 1899ի սեպտեմբերեան համարում տպագրուած յաջորդ «Ռուսահայեր եւ Թրքահայեր» յօդուածում ոճի խնդիրը քննարկուում է հայ գրականութեան երկու հատուածներին բնորոշ գեղարուեստական միտումները շրջանակներում: Այս անգամ Չօպանեանն առաջին պլան է մղում ստեղծագործութեան գաղափարի եւ բովանդակութեան հետ լեզուաճական համընթաց շարժման գործընթացը:

Արեւելահայ գրականութեան լեզուի ու ոճի մասին Չօպանեանի դիտարկումներին ընդդիմանում է նաեւ Մշակը¹⁷: Այս հարցում նրա եւ Մուրճի խմբագրի մօտեցումները համընկնում են: Ընդ որում, Մշակի յօդուածագիրն իր դիտողութիւններն ու հակափաստարկները ներկայացնում է հեզնական տոնով: Նա ծաղրում է մասնաւորապէս ռուսական եզրերի արեւմտահայ տառադարձութիւնները՝ «Լերմոնքոֆ», «Բուշքին», «Թուրկենֆ» եւ, այնուհետեւ անդրադառնում է «ո եւ է օտար բառ» օգտագործելու մասին Չօպանեանի կտրուկ արգելքին. «Խոնարհուենք մեր քաջ հայկաբանի անդառնալի վճռի առաջ եւ դաս առնենք նրանից: Բացէ՛ք «Անահիտի» առաջին երեսները, ուր Չօպանեանը ծանօթացնում է մեզ Ֆրանսիայի հետ, եւ կը տեսնէք «վոտվիլ», «քաֆէ շանթան», «տիլեթանթիզմ», «ժըմանֆիշիզմ», «շանթաժ» բառերը. նոյնիսկ ռուսահայերիս խրատող յօդուածում նստած են «սփիլիսք», «սիսթեմական» բառերը...Ահա հայրենագիտութեան ամբողջ գաղտնիքը»¹⁸:

Ի հարկէ, Մշակի յօդուածի լոյս տեսնելու հիմնական պատճառը Մշակ եւ Մուրճ պարբերականների «սխատեմական հակակրօքեան» առիթով Չօպանեանի մտահոգութիւններն էին¹⁹: Այս իրողութիւնը բանավէճի ներսում ի յայտ է բերում առաւելապէս անհաշտ բանակռուի յարող մի նոր ենթակառոյց: Հետաքրքիրն այն է, որ բանակռուի մասնակիցները (Մուրճի խմբագիր-Մշակի անանուն յօդուածագիր, որը կարծում ենք - խմբագրութեան մշտական աշխատակիցներից մէկն է) բորբոքուած վերլուծում են մէկը միւսի արարքները, քննադատում, վիրաւորական խօսքեր նետում միմեանց հասցէին, եւ այդ ամէնը գրում են՝ դիմելով...Չօպանեանին: Մինչ այդ, իհարկէ մտքերի ուղղակի հակադարձումներով բանակռուներ եղել ու ընթացել էին նշուած թերթերի էջերում: Այս պարագայում պարզապէս երկուսն էլ վիճում էին Չօպանեանի հետ՝ շարունակելով կռուել իրար դէմ...

Անահիտի խմբագրի կարծիքով Մուրճի հանդէպ Մշակի հակակրօքը պատիւ չի բերում վերջինիս, քանի որ որեւէ պարբերականի դէմ ուղղուած քննադատութիւնն առաջին հերթին միտուած պէտք է լինի նրան

կատարելագործման մղելու²⁰: Յաւօք, Զօպանեանի ազնիւ ցանկութիւնը պէտք է մնար իբրեւ ձայն բարբառոյ յանապատի: Բանն այն է, որ յիշեալ պարբերականների միջեւ ծագած հակասութիւնները շուրջ մէկ տասնամեակի վաղեմութիւն ունէին: Մուրճի եւ նրա խմբագրի հանդէպ Արծրունու անբարեացակամ դիրքորոշումը նախ եւ առաջ զաղափարական դրդապատճառներ ունէր. պահպանողականների դէմ շարունակ կռիւ մղող Արծրունին, բնական է, համակրանքով պիտի չվերաբերուէր չափաւոր հայեացքների տէր Արասխանեանի գործունէութեանը: Այս դիրքորոշմանը շարունակում էին հաւատարիմ մնալ Արծրունու աշակերտները: Արասխանեանը, նրանց կարծիքով, «լարախաղացական ընդունակութեամբ» օժտուած «տխրահոշակ հերոս» է, որ իրեն «մի նոր Մեսրոպ» է ձեւացնում²¹: Հակա-մուրճական, իսկ աւելի կոնկրէտ՝ հակա-արասխանեանական մտայնութիւնը նոր բնութագրումներով շարունակում է նաեւ Զօպանեանի գրախօսութեանն անդրադարձող յօդուածում: Ուստի Մշակն ընդամէնն իր պարտքն է համարում փարատել վերջինիս գարմանքը. «Մշակը հալածում է ոչ թէ «Մուրճը», այլ նրա խմբագրի անսահման մեծամտութիւնը: ...Տասը տարի շարունակ «Մշակը» անկեղծօրէն աշխատում է բժշկել Արասխանեանին այդ ախտից, որի շնորհիւ մեր միակ գրական ամսագիրը կիսամեռ դրութեան մէջ է տառապում, բայց, տարաբախտաբար, ախտը անբուժելի է»²²: Այնուհետեւ աւելացնում է, որ իրենք էլ Մուրճից բազմիցս պահանջել են այն՝ ինչի մասին խօսում է Զօպանեանն այժմ²³:

Մշակ-Մուրճ փոխյարաբերութիւններն աւելի հիմնաւոր վերլուծութեան է ենթարկում Արասխանեանը: Նկատենք, որ Մշակի յօդուածագրի նման նա էլ գոհ չէ Զօպանեանի խորհուրդներից, քանի որ դրանք օգտակար եղան «միայն...Մշակին»²⁴: Արասխանեանը ներկայացնում է Մշակի քննադատական ուղղուածութիւնը՝ Փորձ եւ Մուրճ ամսագրերի գործունէութեան հանդէպ նրա դիրքորոշման հիմքերը բացայայտելով: Տարիներ առաջ Մշակը քննադատում էր Փորձին, քանի որ նրա էջերում բացակայում էին հրապարակախօսական տարրը, «հասարակական կարծիքը ղեկավարելու յաւակնութիւնը» (ձեւակերպումը Մշակի յօդուածագրինն է - Դ.Պ.), այժմ նոյն Մշակը քննադատում է Մուրճին, որովհետեւ վերջինիս գործունէութիւնը հիմնուած է... հրապարակախօսութեան վրայ. «Դեհ այժմ տեսէք ինչ կատակներ է խաղում այս օրուայ Մշակը երէկուայ Մշակի հետ (ընդգծումները հեղինակինն են - Դ.Պ.). նա բացականչութիւններ է դնում Փորձի անուան կողքին - որ հարկ վճարած լինի Գր. Արծրունու յիշատակին... Քսան-քսաներեք

տարի առաջ Մշակը միայն խայտառակել գիտէր Փորձին, այժմ՝ նա խորշում է սորա անունից՝ բայց իդէալացնելով նորա իրագործած ծրագիրը...»²⁵ :

Արասխանեանի այս եւ միւս դիտարկումներում որոշակի օրինաչափութիւնների բացայայտումն ակնյայտ է, ինչը լրջութիւն է հաղորդում նրա եզրակացութիւններին: Բայց այդ տողերում անհնար է չնկատել նաեւ ենթակայական մղումը, վիրաւորուածի կեցուածքը, որի արդիւնքում նա եւս չի կարողանում զերծ մնալ հակառակորդի հասցէին ոչ պարկեշտ արտայայտութիւններ անելուց («խորամանկ աղուէս», «սրբութիւն չունեցող», «քութակութիւն անող» եւն.)²⁶ :

«Ռուսահայեր եւ Թրքահայեր» յօդուածում Զօպանեանին զարմացրել էր արեւելահայ պարբերականների բոլոր հակազդեցութիւնը, քանի որ որեւէ կանխակալ կարծիք կամ կողմնակալութիւն ինքը չէր ունեցել: Անահիտի խմբագիրը կրկին հաւաստիացնում է, որ հեռու է «Ռուսահայի» եւ «Թրքահայի» անիմաստ ու տղայական կռիւէն»²⁷ , իսկ քննադատութեան գործը պէտք է լինի վեր կանգնել ամէն տեսակ կողմնակալութիւնից եւ «խղճամիտ» ուսումնասիրութեամբ բացայայտել ազգի երկու հատուածների գոյութեան եւ գրական գործունէութեան տարբերակիչ գծերը²⁸ : Զօպանեանը չի ընդունում յատկապէս Մշակի կողմից արեւմտահայերին տրուած «շուլիմիտ» բնութագրումը, բայց նաեւ շատ չի ծանրանում դրա վրայ եւ անցնում է իր հիմնական ասելիքին, այն է՝ հայ գրականութեան երկու հատուածների բաղդատական ուսումնասիրութեանը: Այս յօդուածով նա իր ընդդիմադիրներին մղում է երկխօսութեան՝ հայ գրականութեան երկու հատուածներին յուզող հիմնախնդիրների շուրջ: Երկխօսութիւնն այս դէպքում ենթադրում էր երեւոյթների առաւել անկողմնակալ դիտարկում, գրական հիմնախնդիրների համակողմանի մեկնաբանութիւն: Ուստի, մի կողմ եւս դրւում Մուրճի, Մշակի եւ Անահիտի գրական քաղաքականութեան ներքին խնդիրները: Հեղինակի տեսադաշտում հայ գրականութեան երկու հատուածների զարգացման օրինաչափութիւններն են, նրանց տարբերակիչ գծերը, ազգային բնաւորութեան ու հոգեբանութեան ուրոյն կերպաւորումները: Զօպանեանը լուրջ ընդհանրացումներ է կատարում, մատնանշում մասնաւորապէս արեւելահայ ու արեւմտահայ մտաւորական արտադրութիւնների դրական ու թերի կողմերը, ապա նաեւ դրանց բնորոշ հիմնական միտումները: Արեւելահայ կամ իր բնորոշմամբ՝ ռուսահայ գրականութեան մէջ առաջին հերթին ընդգծում է «հրապարակագրութիւնը»․ «Բոլոր ռուսահայ գրողները իրենց գործերը յօրինելու ատեն գլխաւոր

նպատակ ունեցած են ժողովուրդը դաստիարակել, իրենց բանաստեղծներն իսկ... տաղաչափող հրապարակագիրներ են»²⁹։ Արեւմտահայ («տաճկահայ») գրականութեան մէջ առաւել ընդհանրական միտում է համարում գեղեցկագիտական ձգտումը։ «Իրենց մեծագոյն փափաքը եղած է «գեղեցիկ» գործեր արտադրել, եւ իրենց գործերը արտադրած են հասարակութեան հմուտ ու նրբացած փոքրիկ մէկ մասին համար. արհամարհած են անմիջական օգտակարութիւնը...»³⁰։ Յաջորդ էջերում նա աւելի է մանրամասնում իր ասելիքի կարեւոր կողմերը, բացայայտում նշուած միտումների նոր երանգներ։

Մեր կարծիքով՝ իսկական բանավէճ-երկխօսութիւնը պէտք է այս յօդուածից յետոյ սկսուէր։ Բայց...

Մշակը շատ անլուրջ է վերաբերում Անահիտի խմբագրի տեսական դիրքորոշումներին։ Դրանց կապակցութեամբ՝ ոչ մի խօսք։ Փոխարէնը վերստին անդրադառնում է «պոլսական շովինիզմի» մասին նախկինում արած իր նկատառմանը եւ Չօպանեանին ուղղուած մեղադրանքը անձնաւորում անհեթեթ բացատրութիւններով³¹։

Մուրճն ընդհանրապէս չի արձագանգել վերոյիշեալ յօդուածին։ Պատճառներից մէկը թերեւս կարելի է համարել այն, որ Արասխանեանն արդէն իսկ ընդարձակ պատասխանով հանդէս էր եկել, թէեւ այս դէպքում հարցը դիտարկւում էր տուեալ պարբերականների գրական քաղաքականութեան զնահատման շրջանակներից դուրս։ Որոշակի դեր կարող էր խաղացած լինել նաեւ հետեւեալ հանգամանքը։ Մուրճի նոյն թրւականի 7-8րդ համարներում Արասխանեանը բանավիճային մէկ այլ յօդուած է տպագրում, այս անգամ՝ Մասիսում (1852-1908) Արամ Անտոնեանի (1872-1952)՝ ռուսահայ գրականութեանը նուիրուած հրապարակումների կապակցութեամբ («Ռուսահայ Գրականութենէն» խորագրի ներքոյ)։ Իսկ աւելի կոնկրէտ՝ տարածայնութեան առիթը Մասիսում Անտոնեանի կողմից մի քանի անձանօթ անունների յիշատակումն էր՝ որպէս արեւելահայ ճանաչուած գրողներ (Պետրոս Մոճոռեանց, Բալուղեան, Ա. Կայծունի, Աթաբեան), որից յետոյ երկու ամսագրերում էլ խօսակցութիւնն աւելի լուրջ բնոյթ է սկսում կրել։ Անտոնեանի՝ «ճանաչուած գրող»ի մասին ըմբռնումներին³² Արասխանեանը հակադրում է իր սկզբունքային դիրքորոշումները, որոնք նա մեկնաբանում է գրող-գրական քննադատ-ընթերցող հասարակութիւն փոխյարաբերութիւնների համատեքստում, նաեւ քննարկում է հայ գրական քննադատութեանը յուզող որոշ խնդիրներ³³։

ինչեւէ, մի բան յստակ էր: ԺԹ. դարը եզրափակող վերջին մէկ-երկու տարում արեւմտահայ ու արեւելահայ պարբերականներում նկատելի աշխուժութիւն է դրսեւորուում հայ գրականութեան երկու հատուածներում ընթացող գրական գործընթացների նկատմամբ: Դա առաջին հերթին պայմանաւորուած էր հասարակական-քաղաքական այն բուռն տեղաշարժերով, որ կատարուում էին այդ տարիներին Արեւելեան ու Արեւմտեան Հայաստանում: Այդ տեղաշարժերի վրայ գործօն ներգործութիւն ունէր մասնաւորապէս հայ քաղաքական կուսակցութիւնների գործունէութիւնը, որոնց ջանքերով Հայկական Հարցը վերստին յայտնուել էր Օսմանեան, Ռուսական կայսրութիւնների եւ եւրոպական տէրութիւնների ուշադրութեան կենտրոնում: Կուսակցութիւնների յեղափոխական տրամադրութիւնները, ազգային ինքնագիտակցութեան բարձրացման ուղղութեամբ հայ ժողովրդի երկու հատուածներում տարուող հետեւողական աշխատանքը իր անմիջական արտայայտութիւնն էր գտնում հայ մամուլի, յատկապէս կուսակցական մամուլի էջերում: Ազգի վաղուայ օրուայ մասին դիրքորոշումները յաճախ ուղեկցւում էին բանավէճերով ու բանակռիւններով: Միմեանց հետ վիճում էին քաղաքական, յեղափոխական գործիչները, հոգեւորականներն ու աշխարհիկները, մշակոյթի եւ արուեստի նուիրեալները: Բացառութիւն էր նաեւ գրական կեանքը:

Անահիտի եւ Մուրճի բանավէճը առաջին լուրջ մտահոգութիւններից մէկն էր երկճիւղ ազգային գրականութեան ներկայի ու վաղուայ օրուայ մասին, նաեւ ուշագրաւ փորձ՝ արեւելահայ ու արեւմտահայ գրական հատուածների ներքին օրինաչափութիւնները բացայայտելու, նրանց ընդհանուր եւ տարբերակիչ գծերը վերհանելու ուղղութեամբ: Նման մօտեցումն, ի վերջոյ, որոշակիօրէն նպաստում էր երկու գրականութիւնների մերձեցմանը: Նկատենք, որ այդ եւ յաջորդ տարիներին, այսինքն՝ Ի. դարասկզբին արեւմտահայ պարբերականներում աւելի յաճախ է տեղ տրուում արեւելահայ գրողների (Խ. Աբովեան, Բաֆֆի, Ա. Շիրվանզադէ եւ այլք), իսկ արեւելահայ պարբերականներում՝ արեւմտահայ գրողների (Պ. Դուրեան, Յ. Պարոնեան, Ա. Արփիարեան եւ ուրիշներ) ստեղծագործութիւններին:

Թէեւ բանավէճի ենթակառուցային շերտում կրկին ի յայտ եկան արեւելահայ պարբերականների (Մուրճ, Մշակ) փոխադարձ անհանդուրժողական տրամադրութիւնները, սակայն Անահիտի խմբագրի ազնիւ պահուածքը, հայ գրականութեան խնդիրներով անկեղծ մտահոգութեամբ լինելու ինչ-որ առումով սթափ խորհրդածութիւնների մղեցին նաեւ

Մուրճի խմբագրին: Այդ խորհրդածույթիւնները նա կարող էր ընդլայնել Զօպանեանի երկրորդ յօդուածի կապակցութեամբ եւ խնդրին առնչուող հարցադրումների համապատկերում շարունակել բանավէճը երկխօսութեան մակարդակով: Նման բան, սակայն, տեղի չունեցաւ:

Հայ պարբերականները այդպիսի երկխօսութեան դեռեւս պատրաստ չէին...:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ա. Զօպանեան, «Մուրճը եւ Ռուսահայ Արդի Գրականութիւնը», *Անահիտ*, Փարիզ, 1899, թիւ 5-6, էջ 178:

² Նոյն, էջ 179:

³ Նոյն, էջ 178:

⁴ Նոյն:

⁵ Նոյն, էջ 180:

⁶ Նոյն:

⁷ Նոյն:

⁸ Նոյն:

⁹ Ա. Արասխանեան, «Մուրճը եւ Արեւելեան Հայոց Արդի Գրականութիւնը», *Մուրճ*, թիւ 4-5, Ապրիլ-Մայիս, էջ 482-496:

¹⁰ Նոյն, էջ 483:

¹¹ Զօպանեան, էջ 180:

¹² Արասխանեան, էջ 486:

¹³ Զօպանեան, էջ 179: Գրախօսութեան մէջ Զօպանեանը նոյն ոգով խօսում է նաեւ եւրոպական գրականութիւնը հայ ընթերցողների սեփականութիւն դարձնելու մասին:

¹⁴ Արասխանեան, էջ 488:

¹⁵ Նոյն, էջ 491:

¹⁶ Նոյն:

¹⁷ «Ներքին Տեսութիւն. Մամուլ», *Մշակ*, 1899, 27 Ապրիլի:

¹⁸ Նոյն:

¹⁹ Զօպանեան, էջ 178:

²⁰ Նոյն:

²¹ «Ներքին Տեսութիւն...», *Մշակ*, 1899, 27 Ապրիլի:

²² Նոյն:

²³ Նոյն:

²⁴ Արասխանեան, էջ 489:

²⁵ Նոյն, էջ 490:

²⁶ Նոյն, էջ 489, 491:

²⁷ Ա. Զօպանեան, «Ռուսահայեր եւ Թրքահայեր», *Անահիտ*, Փարիզ, 1899, թիւ 11, էջ 317:

²⁸ Նոյն, էջ 318:

²⁹ Նոյն, էջ 322:

³⁰ Նոյն, էջ 324:

³¹ Տե՛ս՝ «Ներքին Տեսութիւն. Մամուլ» խորագրի ներքոյ տպուած յօդուածը, Մշակ, Թիֆլիս, 1899, 9 Նոյեմբերի:

³² «Ռուսահայ Գրականութենէն», Մասիս, 1899, Թիւ 13-14, էջ 434-435:

³³ «Հանրային Եւ Գրական Քննադատութիւնը», Մուրճ, 1899, Թիւ 7-8, էջ 889-900: Այս բանավէճը Թերեւս մէկ ամի յօդուածի նիւթ կարող է ծառայել:

A DISCOURSE ON THE BASIC CONCERNS OF
THE TWO BRANCHES OF ARMENIAN LITERATURE IN THE 1899 ISSUES
OF THE *ANAHIT*, *MOORDJ* AND *MESHAG*
(Summary)

DAVID PETROSIAN

The author highlights literary concerns that were raised by the Paris-based Armenian literary critic, poet, writer and scholar Arshag Chobanian and which evolved into a set of interesting literary discussions on Eastern and Western Armenian literary aesthetic issues.

Based on a number of articles that were written as a response and counter response to Chobanian's article, the author concludes that these were the very first discussions that looked in earnest at the concerns of Eastern and Western Armenian literature, both current and forthcoming.

